



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 10/21**

29.04.2021թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես՝ Դիմողը վիճարկում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 3-րդ մասի (21.06.2018 թվականի՝ ՀՕ-344-Ն օրենքի լրացումներով և փոփոխություններով գործող խմբագրությամբ) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին, 155-րդ հոդվածի 3-րդ մասին այնքանով, որքանով չի սահմանում հստակ բացառություն զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ազատման դեպքի համար:

Սահմանադրության 133-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում, որի 1-ին մասի համաձայն՝ վերջինս օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: Ըստ Դիմողի՝ նշված նորմի շարադրանքից բխում է, որ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը պետք է սահմանված լինեն օրենքով: Իրավական հետևանքի վրա հասնելու համար անհրաժեշտ է փաստակազմի առկայությունը: Այդպիսի փաստակազմը կարող է լինել և կոնկրետ դեպքերի փաստի տեսքով, և որոշակի պայմանների առկայության դեպքում՝ հայեցողական, սակայն ցանկացած պարագայում այդպիսի փաստակազմը պետք է համապատասխանի Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի պայմաններին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմը չի կարող մեկնաբանվել որպես «օրենքով նախատեսված դեպք» այն պատճառով, որ տվյալ դրույթով նախատեսվում է օրենքով սահմանված դեպքերի բացակայության պարագայում կամայական որոշմամբ պաշտոնից ազատելու հնարավորություն՝ առանց որևէ փաստակազմի կամ պայմանների վրա հասնելու անհրաժեշտության շարադրման, հակասում է Սահմանադրությամբ սահմանված որոշակիության սկզբունքի պահանջներին:

Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ՝ աշխատանքից ազատման հիմքերը պետք է նախատեսված լինեն օրենքով, մինչդեռ, ըստ Դիմողի, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասում անտեսվել է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասում և 57-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ պահանջը, ինչպես նաև 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի պահանջները:

Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի և «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումներից պարզ է դառնում, որ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման ժամկետը պետք է լինի որոշակի՝ սահմանելով պաշտոնավարման հնգամյա ժամկետ: Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի ազատման դեպքում: Տվյալ դեպքում ընդհանուր և հատուկ նորմերի միջև կոլիզիա առաջանալու պայմաններում պարզ է, որ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետին վերաբերող իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգավորումներն են Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասը և «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը:

Այսպիսով՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը իրավակիրառ պրակտիկայում որոշակի մեկնաբանության հետևանքով առերևույթ հակասում է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին, 155-րդ հոդվածի 3-րդ մասին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպիսով՝ Դիմողը վիճարկում է «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 3-րդ մասի (21.06.2018 թվականի՝ ՀՕ-344-Ն օրենքի լրացումներով և փոփոխություններով գործող խմբագրությամբ) համապատասխանությունը Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 79-րդ հոդվածին, 133-րդ հոդվածի 1-ին մասին, 155-րդ հոդվածի 3-րդ մասին այնքանով, որքանով չի սահմանում հստակ բացառություն զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ազատման դեպքի համար:

1. «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 32-րդ հոդվածի (վերնագրված՝ «Գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը») 2-րդ մասի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:*

Հաշվի առնելով վերոգրյալը և կիսելով դիմումատուի դիրքորոշումը Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ, ստորև ներկայացում ենք նաև վերը նշված դրույթի Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց լինելու լրացուցիչ հիմնավորումներ.

Օրենքի վիճարկվող դրույթի՝ 40-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

3. *Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ:*

Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և*

կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենքով պետք է հստակ սահմանված լինեն զինված ուժերի և այլ զորքերի ամբողջ բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման և ազատման դեպքերն ու կարգը, ինչի հիման վրա էլ Հանրապետության նախագահը պետք է իրացնի իրեն վերապահված լիազորությունը:

Ի հակառակ վերը նշվածի՝ Սահմանադրությունը որոշակի պաշտոնների նշանակելիս Հանրապետության նախագահին վերապահել է կամայականության դրսևորում: Սահմանադրության 150-րդ հոդվածի համաձայն՝ (...) *Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: (...):* Նշված հոդվածի շարադրանքից բխում է, որ Հանրապետության նախագահի կողմից տվյալ պաշտոններին նշանակելու համար դեպքերի և կարգի՝ օրենքով սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ձինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմին օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակելը և ազատելը իր հերթին ուղղակիորեն բխում է Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մասից, այն է՝ *Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են: Նշված նորմի սահմանումն ինքնանպատակ չէ, այլ երաշխիքն է այն բանի, որ վերոգրյալ պաշտոններին նշանակված անձինք քաղաքական իշխանության փոփոխման պայմաններում շարունակեն պաշտոնավարել (դրանք զինվորական, այսինքն՝ մասնագիտական ծառայության, այլ ոչ թե քաղաքական պաշտոններ են)*՝ դրանով իսկ ապահովելով զինված ուժերի սահմանադրական առաքելության լիարժեք ու անխափան իրականացումը՝ ՀՀ պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը քաղաքական պրոցեսներից անկախ: Վերջիններիս նշանակելու և ազատելու դեպքեր չսահմանելը, այսինքն՝ այդ հարցում կամայականություն դրսևորելը ինքնին կհանգեցնի տվյալ պաշտոնների քաղաքականացման:

Հետևաբար՝ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով չի սահմանում Ջինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմին նշանակելու և ազատելու դեպքերը, հակասում է Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին:

2. Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Ջինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով (...):*

ՀՀ Սահմանադրական դատարանը 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշման մեջ նշել է. «(...) Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահն իրականացնում է հետևյալ հայեցողական լիազորությունները. (...)

ե) *զինված ուժերի բնագավառում՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը նշանակելը և ազատելը*, բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելը (Սահմանադրության 133-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները, (...)

ժ) *զինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակելը* (Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները, (...):

«Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետը նշանակվում է հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնում:*

Վերոգրյալ հոդվածների շարադրանքից բխում է, որ Սահմանադրությունը, Հանրապետության նախագահին վերապահելով զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմին *նշանակելու և ազատելու* լիազորությունը, միաժամանակ առանձին հոդված է նախատեսել Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետին *նշանակելու* դեպքի համար, այն է՝ Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակում է Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով, ինչից էլ հետևում է, որ Հանրապետության նախագահի կողմից Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետին

ազատելու լիազորությունը սահմանված չլինելու պարագայում վերջինս չի կարող հանդես գալ նման իրավասությամբ:

Համեմատության համար նշենք հետևյալը. Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: (...):* Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:* Նշված հոդվածների բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրությունը, Հանրապետության նախագահին օժտելով մի շարք պաշտոնների նշանակելու լիազորությամբ, վերջինիս չի վերապահել այդ պաշտոններից ազատելու իրավասությունը: Նշվածն իր հերթին չի նշանակում, որ նշված պաշտոններին նշանակված անձինք անփոխարինելի են, նրանց ազատումը պետք է լինի համաչափ և բխի օրենքից, սակայն այն չի կարող բխել վերջիններիս նշանակելու լիազորությունից, այսինքն՝ այն, որ Սահմանադրությամբ վերապահված՝ որոշակի պաշտոնի նշանակելու լիազորությունից ինքնին չի կարող բխել նաև այդ պաշտոնից ազատելու լիազորություն:

Հետևաբար՝ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետին ազատելու լիազորությամբ օժտված չլինելու պայմաններում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը, բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելու կարգը սահմանելու հետ մեկտեղ բացառություն չնախատեսելով զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատման դեպքի համար, հակասում է Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասին:

3. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է *սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով:* (...):

Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի 68րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, *Որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի*

հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի ուշադրությունն ենք հրավիրում Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենքի 35.1-ին հոդվածի վրա, որը կարգավորում է պայմանագրային զինձառայողին բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու կարգը: Օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն՝ *պայմանագրային զինձառայողը բարձրագույն հրամանատարական կազմի տվյալ զինվորական պաշտոնին նշանակված է համարվում իրավունքի ուժով՝* սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետը գրավոր հայտարարություն է տարածում: (...):

Մինչդեռ Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա *համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:*

Նշված կարգավորումներից բխում է, որ Սահմանադրությունը պայմանագրային զինձառայողի՝ բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնին իրավունքի ուժով նշանակված համարվելը պայմանավորել է համապատասխան ակտի ուժի մեջ մտնելով, իսկ վիճարկվող դրույթով սահմանվում է, որ իրավունքի ուժով հաստատվում է զինձառայողի համապատասխան պաշտոնին նշանակված լինելու փաստը, այլ ոչ թե իրավունքի ուժով համապատասխան ակտի ընդունված լինելու հանգամանքը, որի ուժով էլ անձը նշանակվում կամ ազատվում է պաշտոնից: Այսինքն՝ Սահմանադրությունը Հանրապետության նախագահի անգործության դեպքում մինչև նա է նախատեսում է ակտի ընդունում իրավունքի ուժով, մինչդեռ, ինչպես նշվեց՝ օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ անձի պաշտոնի նշանակումը կամ ազատումը, Հանրապետության նախագահի անգործության դեպքում

չի պայմանավորվում իրավունքի ուժով ակտի ընդունմամբ, այլ՝ իրավունքի ուժով՝ անձի նշանակված լինելու կամ պաշտոնից ազատված լինելու փաստի հաստատմամբ:

Այսպիսով՝ վերոգրյալ պատճառաբանությամբ Օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ «նշանակված է համարվում իրավունքի ուժով» արտահայտությունը մեկնաբանության չափանիշներից ելնելով չի կարող մեկնաբանվել որպես «համապատասխան ակտի ուժի մեջ մտնել», ինչից հետևում է, որ Օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասը առերևույթ հակասում է Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 35.1-ին հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասին, 139-րդ հոդվածի 3-րդ մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանությունը խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169